ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հուլիսի 2-ից 4-ը Բելգիայի Թագավորություն (ք.Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Դավիթ Անանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք.Բրյուսել, հուլիսի 2-ից 4-ը

4. Հրավիրող կողմը՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (ՀՄՆԿ-IOTA)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գլխավոր ասամբլեայի հավաքները կրում են պարբերական բնույթ և այս՝ թվով 23-րդ հանդիպումը, նպատակ ուներ ադմինստրատիվ և տեխնիկական նիստերի ընթացքում անդրադառնալ ինչպես կազմակերպության առջև ծառացած ներկայիս խնդիրներին և դրանց հնարավոր լուծումներին, 2020թ.-ի աշխատանքային պլանին և բյուջեի հաստատմանը, այնպես էլ կազմակերպել կազմակերպության ղեկավար կազմի հերթական ընտրությունը:

6. Քննարկված թեմաները

Քննարկվել են 2018թ.-ի ֆինանսական և ներքին աուդիտի զեկույցները, 2020թ.-ի բյուջեն և աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև ՀՄՆԿ-ի ներքին կանոնակարգումների փոփոխման հետ կապված հարցեր: Ուսումնասիրվել է 2018թ.-ի գործողությունների զեկույցը, ինչպես նաև Ֆինանսական և ներքին աուդիտի 2018թ.-ի զեկույցը: Տարաբնույթ հարկային հիմնահարցերի քննարկումներից զատ, անդրադարձ է կատարվել այնպիսի կարևորագույն հարցերի ինչպիսիք են հարկային ծառայողների համար նոր աշխատանքային պայմանների և միջավայրի ապահովումը, ինչը հնարավորություն կընձեռի խուսափել որակյալ մասնագետների արտահոսքից:

Գլխավոր ասամբլեայի շրջանակներում կայացել է վարչական խորհրդի հանդիպում, որին հաջորդող ադմինիստրատիվ նիստի ընթացքում ընտրվել է կազմակերպության հաջորդ նախագահը՝ Հունաստանի հարկային ծառայության ղեկավար Գեորգիոս Պիտսիլիսը: Ընտրվել է վարչական խորհրդը, որը կազմված է Բելգիայի, Վրաստանի, Հունգարիայի, Իտալիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Ուկրաինայի և Միացյալ Թագավորության ներկայացուցիչներից: Դրանց հաջորդել է վարչական քարտուղարի ընտրությունը, որի արդյունքում ընտրվեել է Սլովակիայի հարկային ծառայության նախկին ղեկավար, 2017-2018թթ. ժամանակաշրջանում ՀՄՆԿ-ի նախագահ Ֆրանտիսեկ Իմռեցզը:

Ադմինիստրատիվ նիստի ժամանակ ՀՄՆԿ-ի անդամ երկրները մերժեցին Կոսովոի հարկային մարմնի դիմումը ՀՄՆԿ-ին անդամակցելու վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Առանձին կարճատև հանդիպումներ են տեղի ունեցել ՀՄՆԿ-ի ղեկավար պրն. Հանս Դոնդտի և գործադիր տնօրեն պրն. Միգել Սիլվա Պինտոյի հետ, որոնց ընթացքում քննարկվել են ՀՄՆԿ-ՊԵԿ համագործակցության հետ կապված ընդհանրական հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԻՆչպես նշվեց, ադմինիստրատիվ նիստի ընթացքում առաջադրվել է ՀՄՆԿ-ի վարչական խորհրդի 2019/2020 թթ. կազմը: Որոշում է կայացվել նոր առաջադրված վարչական խորհրդի վրա դնել հաջորդ՝ 24-րդ գլխավոր ասամբլեան կազմակերպելու վայրը ընտրելու պարտականությունը:

Տեխնիկական նիստի արդյունքում անդամ երկրները համաձայնության են եկել համապատասխանեցնել իրենց մարդկային ռեսուրսները կառավարելու քաղաքականությունը նոր՝ հաճախակի փոփոխվող միջավայրի պահանջներին, աշխատանքի վերցնել հատուկ գիտելիքներով աշխատողների, ովքեր քաջատեղյակ են նոր տնտեսական մոդելներին, համգործակցային և թվայնացված տնտեսությանը և ժամանակակից հաղորդակցման ձևերին:

Բացի այդ համաձայնության են եկել, որ հարկայաին մարմինները կարիք ունեն բարձր մակարդակի թվային, տվյալների և վիճակագրության ոլորտներում գիտակ, ինչպես նաև տվյալները, հաղորդկացման ձևերը արդյունավետ կերպով օգտագործող անձնակազմի: Բացի վերոնշյալից համաձայնության են եկել նաև աշխատանքային պայմանների բարելավման, ավելի ճկուն աշխատանքային միջավայրի ստեղծման և ի

տարբերություն մասնավոր հատվածի՝ մրցակցության վերացմանն ուղղված քաղաքականության ներդրման շուրջ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Տեխնիկական և ադմինսիտրատիվ նիստերի ընթացքում կայացված ոևոշումները շարադրված են 8-րդ կետի ներքո:

Բացի վերոնշյալից, որոշում է կայացվել հաջորդ՝ 24-րդ նիստի թեման սահմանել որպես <<Հարկային թափանցիկության ժամանակաշրջանում լավագույն կերպով տվյալների օգտագործման ապահովում>>:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

08.07.2019թ.